ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 11

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

գիտական խորհրդի 31.01.2020թ. նիստի

Գիտական խորհրդի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ. Սևակ 4 հասցեում:

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 40 (քառասուն) անդամից՝ 32-ը (երեսուներկու),

Նիստին մասնակցում էին՝

1.	Սերոբյան Երվանդ	Գիտական խորհրդի նախագահ, ռեկտորի ԺՊ
2.	Ավետիսյան Նազելի	Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ
3.	Նիկողոսյան Գագիկ	ՇՊՀ պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարի ԺՊ
4.	Մելքոնյան Հովիկ	Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն
5.	Սարգսյան Արմենուհի	Գիտական քաղաքականության, որակի ապահովման ու կառավարման կենտրոնի տնօրեն
6.	Խաչատրյան Թերեզա	Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և ՏՏ կենտրոնի տնօրեն
7.	Պետրոսյան Կարինե	Գիտական քարտուղար (գիտական խորհրդի քարտուղար)
8.	Մելիքյան Թամարա	Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան
9.	Հովհաննիսյան Օֆելյա	Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան
10.	Մարդոյան Ռուզաննա	Մանկավարժության ֆակուլտետի դեկան
11.	Մկրտչյան Արթուր	Ռազմական ամբիոնի պետ
12.	Այվազյան Կարինե	ՇՊՀ քոլեջի տնօրեն
13.	Դարբինյան Կարեն	ՇՊՀ ավագ դպրոցի տնօրեն
14.	Խաչատրյան Վալերի	ՇՊՀ արհմիության նախագահ
15.	Սողոյան Սպարտակ	Մ.գ.դ, պրոֆեսոր, (անենաերիտասարդ դոկտոր)
16.	Մկոյան Արտաշես	Մ.գ.դ, պրոֆեսոր, (անենատարեց դոկտոր)

17.	Սարգսյան Սամվել	ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզմաթ. գիտությունների դոկտոր, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր
18.	Մկրտչյան Արթուր	Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի գործարարության և վարչարարության ամբիոնի վարիչի ԺՊ, տնտ.գ.թ., դոցենտ
19.	Ղուկասյան Լուսիկ	Մանկավարժության ֆակուլտետի մանկավարժության ամբիոնի վարիչի ԺՊ, մ.գ.թ., դոցենտ
20.	Աղանյան Գևորգ	Մանկավարժության ֆակուլտետի ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոնի վարիչի ԺՊ, մ.գ.թ., դոցենտ
21.	Հովհաննիսյան Արտակ	Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի իրավագիտության և քաղաքագիտության ամբիոնի վարիչի ԺՊ, պ.գ.թ., դոցենտ
22.	Սահակյան Կարինե	Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի հոգեբանության ամբիոնի վարիչի ԺՊ, հոգ.գ.թ., դոցենտ
23.	Հայրապետյան Սերգո	Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ, բան. գիտ. դոկտոր
24.	Կուրազյան Օֆելյա	Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի արվեստի ամբիոնի վարիչի ԺՊ, բ.գ.թ., ասիստենտ
25.	Տեր-Ադամյան Շուշան	Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի միջմշակութային հաղորդակցության և զբոսաշրջության ամբիոնի վարիչի ԺՊ, բ.գ.թ., ասիստենտ
26.	Մաթևոսյան Էվելինա	Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի վարիչի ԺՊ, բ.գ.թ., դոցենտ
27.	Համբարյան Ժենյա	Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի
28.	Հովհաննիսյան Յուլյանա	Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի մաթեմատիկա մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի
29.	Ամիրխանյան Անուշ	Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի թարգմանչական գործ՝ անգլերեն և ռուսերեն մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի
30.	Քոչարյան Անահիտ	Մանկավարժության ֆակուլտետի տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի

31.	Խաչատրյան Կարեն	Մանկավարժության ֆակուլտետի ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ մասնագիտության 2-րդ կուրսի ուսանող
32.	Սարգսյան Սվետլանա	Ռազմական ամբիոնի նախնական զինվորական պատրաստություն մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի

ՕՐԱԿԱՐԳ

1. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի հարցումների անցկացման կարգի հաստատման մասին

Հաղ.՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավար, կենտրոնի տնօրեն Ա. Սարգսյան

2. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ուսանողների վարկանիշավորման և խրախուսման կանոնակարգի հաստատման մասին

Հաղ.՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավար, կենտրոնի տնօրեն Ա. Սարգսյան

3. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի քոլեջի 2018-2019 ուստարվա գործունեության հաշվետվության մասին

Հաղ.՝ քոլեջի տնօրեն Կ. Այվազյան

4. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ավագ դպրոցի 2018-2019 ուստարվա գործունեության հաշվետվության մասին

Հաղ.՝ ավագ դպրոցի տնօրեն Կ. Դարբինյան

5. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի կանոնադրության հաստատման մասին

Հաղ .՝ արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն Հ. Մելքոնյան

6. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

1. ԼՍԵՑԻՆ՝.

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի հարցումների անցկացման կարգի հաստատման մասին

Ա. Սարգսյանը ներկայացրեց, որ կարգը 5 օր առաջ էլեկտրոնային նամակով ուղարկվել է գիտական խորհրդի անդամներին, նրանցից դիտարկումներ ու առաջարկներ չեն ստացվել, մինչ այդ կարգը ուղարկվել է ստորաբաժանումներ, քննարկվել է բուհի համապատասխան հանձնաժողովների կողմից, այնուհետև ներկայացվել գիտական խորհրդի քննակմանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

առնվել Պարոն Գ. Նիկողոսյանն ասաց, որ այս տարվա տարեսկզբին ռեկտորի ԺՊ-ի համաձայնեցված հարցումներն իրականացնելու համար կազմվել է աշխատանքային պլան և որ փուլում են իրենք հստակեցնում կամ համաձայնեցնում, թե պլանում ընդգրկված այդ հարցումներից որոնք պիտի գնան գիտական խորհուրդ՝ հաստատման, որոնք՝ նախաձեռնող խմբի կողմից:

Ա. Սարգսյանը պատասխանեց, որ այն իրականացվում է հարցարանի հաստատման գործընթացի փուլում ապա շարունակեց, որ գիտական խորհուրդ մտնող հարցը հարցումն իրականացնողի հետ քննարկվում է և հարցումների արդյունքները ներկայացվում գիտական խորհուրդ:

Պարոն Գ. Նիկողոսյանին հետաքրքրում էր, թե միայն հարցումն իրականացնողի, թե նաև հարցման ենթարկվածների հետ են քննարկում:

Ա. Սարգսյանը պատասխանեց, որ հարցաթերթիկների մշակման ժամանակ երկուստեք պետք է համաձայնեն, ապա հարցաթերթիկները ենթարկվեն հաստատման:

Պարոն Գ. Նիկողոսյանը ուզեց հստակեցրեց, թե հարցումներ իրականացնող ստորաբաժանու՞մն է որոշում ներկայացնել գիտական խորհրդի քննարկմանն ու հաստատմանը:

Պարոն Ա. Մկրտչյանը արտահայտվեց, որ կարող է հարցում իրականացնողը խաբուսիկ, ոչ հավաստի հարցադրումներ իրականացնի, որի հետ հարցվողները համաձայն չեն, սակայն հրապարակում են հարցման արդյունքները և իրական պատկեր չի ստացվում, ստացվում է սուբյեկտիվ կարծիք:

Պարոն Սերոբյանի կարծիքով հարցում իրականացնողն ու հարցվողները պետք է գան կոնսենսուսի, հետո ներկայացնեն գիտական խորհուրդ՝ հաստատման:

Ա. Սարգսյանը գտավ, որ ավելի նպատակահարմար է, որ հարցը տեղափոխվի հաջորդ գիտական խորհրդի նիստի քննարկմանը, որպեսզի ավելի հստակեցվեն բարձաձայնված հարցերը:

Պարոն Սերոբյանը նկատեց, որ բուհում հարցումներ իրականացնելիս պետք է ինֆորմացված լինել խնդրից, նպատակից, մեթոդոլոգիայից, հարցաշարերի կառուցվածքից, որպեսզի հետագայում զերծ մնան շահերի բախումից, այդ իսկ պատճառով ցանկալի է, որ ևս մեկ անգամ հարցի կապակցությամբ քննարկում կազմակերպել և հաջորի գիտական խորհրդի նիստում ներկայացնել հաստատման:

Տիկին Ռ. Մարդոյանը գտնում է, որ շատ լավ աշխատանք է կատարված, սակայն քանի որ այն կարգ է, ավելի լավ է նորմատիվային գործածույթներն էլ ամբողջական լինեն, ապա ներկայացվեն գիտական խորհրդին:

Սերոբյանը ամփոփեց, որ պետք է հստակեցնել հարցումների թույլատրելիության տիրույթը, հարցարանը հաստատելու տիրույթը, ապա ստացված արդյունքները գիտական խորհրդին ներկայացնելու պահանջները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի հարցումների անցկացման կարգը՝տեղափոխել գիտական խորհրդի հաջորդ նիստի քննարկմանը՝ պայմանավորված դրա նորմատիվային գործառույթների ամբողջական հստակեցման և լրամշակման նոր մոտեցումների ամրագրման անհրաժեշտությամբ:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

32անդամ. կողմ՝ 32, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2. ԼՍԵՑԻՆ՝

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ուսանողների վարկանիշավորման և խրախուսման կանոնակարգի հաստատման մասին

Ա. Սարգսյանը ներկայացրեց, որ կարգը մշակվել է դեռևս մեկ տարի առաջ, որից հետո ներկայացվել է բուհ ստորաբաժանումներ, ՈԻԳԸ, քննարկվել նաև ուսանողության հետ, նրանց կողմից կատարվել են դիտարկումներ, որոնք ընդունելի են եղել և հաշվի են առել կարգը մշակելու ընթացքում: Այնուհետև Ա. Սարգսյանը նշեց, որ ուսանողների վարկանիշավորման և խրախուսման կանոնակարգի ընդունումը բուհում լավագույն ավանդույթ ներմուծելու նպատակ է հետապնդում՝ ուսանողներին ամենամյա մրցանակների ներկայացնելու, ավանդույթ ներդրվի, որպեսզի այդ միջոցառումները վերածվեն է համահամալսարանական տոնի: Ա. Սարգսյանը ասաց նաև, որ կարգը մշակելիս նկատի են բուհի առաջնահերթությունները, նրա կողմից հղում տրվեց կանոնակարգի հավելված 1-ին, որտեղ չափանիշները հաշվի են առնվել դուրս գալով բուհի առաջնահերթություններից:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Թ. Խաչատրյանի կարծիքով կանոնակարգում ամրագրված «թանկարժեք նվեր» արտահայտությունը կարելի է փոխարինել ընդամենը «նվեր» բառով:

Ա. Մկրտչյանը նկատեց, որ «թանկարժեք»-ը գնի հետ չպետք է նույնացնել և եթե բուհը արժեվորել է այդ նվերը, իրոք այն է թանկարժեք է:

Ա. Սարգսյանը նկատեց, որ կարելի է ուղղում կատարել և գրել «նվեր» կամ «հուշանվեր»:

Շ. Տեր- Ադամյանը կանոնակարգի 9.7,և 6.1 կետերի հետ կապված խմբագրական ու վերաձևակերպման հարցեր առաջ քաշեց:

Ա. Սարգսյանը համաձայնեց Ք. Տեր-Ադամյանի դիտարկումներին, նկատեց, որ իր կողմից դրանք ընդունելի են և կուղղվեն:

Պարոն Սերոբյանը հարցը դրեց քվեարկության՝ արված խմբագրումներով հաստատել կանոնակարգը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ուսանողների վարկանիշավորման և խրախուսման կանոնակարգը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

32անդամ. կողմ՝ 32, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

3. ԼՍԵՑԻՆ՝

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի քոլեջի 2018-2019 ուստարվա գործունեության հաշվետվության մասին

Կ. Այվազյանի կողմից ներկայացվեց հաշվետու ժամանակաշրջանում քոլեջի ընդունելության, մրցույթի, դասաբաշխման գործառույթների մասին, խոսվեց ըստ բաժինների ուսանողների թվաքանակի մասին: Տիկին Այվազյանը խոսեց նաև քոլեջի ամբիոնների, ուսումնամեթոդական բաժնի, որակի ապահովման կենտրոնի աշխատանքնորի մասին, նշեց, որ համագործակցում են մարզի քոլեջների և Վանաձորի քոլեջի հետ: Տիկին Այվազյանը իր խոսքում առանձնահատուկ շեշտադրեց նաև դասախոսների վերապատրաստման և ավարտական աշխատանքների հետ կապված գործընթացները, ներկայացրեց ուսանողների առօրյան քոլեջում, նրանց կողմից կազմակերպած և անցկացրած միջոցառումները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Ն. Ավետիսյանը նշեց, որ իրոք, քոլեջում կատարված բարեխիղճ աշխատանքի հետևանքով է պայմանավորված դիմորդների հոսքը և նրանց քանակի ավելացումը դեպի քոլեջ՝ համեմատելով Վանաձորի նույն կարգավիճակն ունեցող քոլեջի հետ, որտեղ դիմորդների քանակը կտրուկ նվազել է, այնուհետև շեշտեց, որ քոլեջ-բուհ, քոլեջ-նախարարություն կապերը և աշխատանքները կատարվում են բացառապես

բարձր կատարողությամբ, որը իր կարծիքով քոլեջի ղեկավարության կողմից իրականացվող պարտաճանաչության արդյունք է: Տիկին Ավետիսյանը նշեց, որ առիթն օգտագործելով ուզում է շնորհակալություն հայտնել տիկին Այվազյանին, որ իրենց բոլորի կողմից սիրելի կրթօջախում հաջողվել է ձևավորել առողջ մթնոլորտ և հաջորդ կարևոր քայլը քոլեջի հավատարմագրման գործընթացն է:

Տիկին Ավետիսյանն առաջարկեց նաև, որ այսուհետ հաշվետվություններ լսելուց և գնահատելուց առաջ լինեն հարակից զեկուցումներ՝ նշելով, որ այդ փորձառությունը բուհում իրենք ունեցել են և այժմ չգիտես ինչու չի իրականացվում:

Նա նշեց, որ հարակից զեկույցների պարագայում ցանկացած հաշվետվություն ավելի հավաստի կլինի գիտական խորհրդի անդամների համար, ուղղակի պետք է ձևավորել համապատասխան հանձնաժողով այդ աշխատանքը կատարելու համար:

Պարոն Սերոբյանը հանձնարարեց, որ տիկին Ավետիսյանն իր առաջարկած հարցի վերաբերյալ ներկայացնի որոշման նախագիծ, որով գիտական խորհուրդը առաջնորդվի ցանկացած ստորաբաժանան հաշվետվություն գնահատելիս:

Ա. Մկոյանը հարց ուղղեց տիկին Այվազյանին, թե արդյո՞ք տեղյակ են քոլեջի շրջանավարտների «ճակատագրից»:

Տիկին Այվազյանը պատասխանեց, որ իրենք ունեն կարիերայի կենտրոն, որի աշխատակիցը ընդամենը մեկ շաբաթ առաջ է ներկայացրել իր հաշվետվությունը նախարարություն կապված շրջանավարտների հետ: Այնուհետև տիկին Այվազյանը նշեց, որ շրջանավարտների հետ իրենց կապը անընդմեջ է, Գյումրու զբաղվածության կենտրոնի հետ համագործակցելով իրենք աշխատում են շրջանավարտներին ապահովել աշխատանքով և կան բազմաթիվ փաստեր, որ քոլեջի բազմաթիվ շրջանավարտներ քոլեջի անմիջական միջնորդությամբ են աշխատանք գտել՝ ընդհուպ նաև մասնավոր նախակրթարաններում:

Հ. Մելքոնյանը նշեց, որ ինքը առնչվել է քոլեջի գործունեության ընդամենը մի ոլորտի՝ արտաքին համագործակցության բաժնի հետ և այդ աշխատանքային խմբի դրական ու պատասխանատու լուրջ մոտեցումը տիկին Այվազյանի համակարգմամբ անմիջապես նկատելի է եղել: Պարոն Մելքոնյանը նշեց, որ քոլեջն այսօր մարզի տարբեր կազմակերպությունների և Վանաձորի քոլեջի հետ համագործակցության պայմանագրեր ունի կնքած և հաջողությամբ իրականացնում է այդ աշխատանքները: Շարունակելով դրվատանքի խոսքեր ուղղել քոլեջի աշխատանքային գործունեության վերաբերյալ՝ պարոն Մելքոնյանն առաջարկեց հաշվետվությունը գնահատել բավարար:

Ա. Սարգսյանը ներկայացրեց, որ համաձայնելով ներկայացված դրական աշխատանքների հետ, ինքն այնուամենայնիվ գտնում է, որ հարկ է

հաշվետվությունների հետ կապված համեմատական վերլուծություններ ներկայացվեն և առաջարկում է այսուհետ դա նկատի ունենալ:

Պարոն սերոբյանը նկատեց, որ անընդհատ խոսվում է դրականի մասին, սակայն ինքը ցանկանում է, որ տիկին Այվազյանը նշի նաև իրեց թերություններն ու խնդիրները:

Տիկին Այվազյանը պատասխանեց, որ քոլեջում ցանկացած կատարված աշխատանքից հետո, թեկուզ դա լինի կիսամյակային, ամփոփվում է այն և քոլեջի համապատասխան հանձնախմբի կողմից կատարվում և ներկայացվում է սվոտ-վերլուծություն: Տիկին Այվազյանը շարունակեց, որ իրենց մոտ թույլ կողմերից է լսարանների ոչ հագեցված վիճակը, ինչպես նաև դասախոսների ցածր վարձատրությունը, դասախոսների աշխատավարձը կազմում է մեկ դրույքի դեպքում 54 000 ՀՀ. դրամ, իսկ ամբիոնի վարիչներն ու ուսումնամեթոդական խորհուրդը աշխատում է անվճար սկզբունքով:

Պարոն Սերոբյանը ասաց, որ անցյալ տարի քոլեջում կատարվեց ցածր չափով աշխատավարձի բարձրացում:

Տիկին Այվազյանը հակադարձեց, որ աշխատավարձի բարձրացումը դասախոսներին չի վերաբերել:

Պարոն Սերոբյանը պատասխանեց, որ աշխատավարձի բարձրացումը կատարվել է հնարավորության սահմաններում և քոլեջը համալսարանի միակ ստորաբաժանումն է, որտեղ կատարվել է աշխատավարցի բարձրացում:

Ա. Սարգսյանը ներկայացնելով, որ համալսարանի մի մասնաշենքը, որը գտնվում է Շիրակացի 5 հասցեյում և որտեղ տեղակայված են ռազմական, արվեստի ամբիոնները և քոլեջը, չունի բուժկետ և առաջարկեց հնարավորության դեպքում այդ մասնաշենքում ևս ունենալ բուժկետ:

Տիկին Այվազյանը ներկայացրեց, որ քոլեջը գտնվում է հավատարմագրման շեմին և գործընթացի շրջանակներում ուսանողների հետ հարցումներ կատարելիս, նրանց կողմից նշվել էին բուֆետի և բուժկետի անհրաժեշտության մասին: Այնուհետև շարունակեց, որ իրեց ձեռքբերումն էր այսօր արդեն բուֆետ ունենալը, սակայն բուժկետի հարցը լուծված չէ, իր կարծիքով այն խիստ անհրաժեշտ է, քանի որ ունեն հիվանդ ուսանողներ, սպորտդահլիժում բազմիցս ուսանողների ինքնազգացողության վատացման դեպքեր են գրացվել և շտապ օգնության կանչերը ամբողջ շենքում խառնաշփոթ են առաջացրել:

Պարոն Սերոբյանի կողմից ներկայացվեց, որ այս հարցի առնչությամբ կդիմեն հոգաբարձուների խորհրդին՝ առաջիկա նիստի ընթացքում հարցին լուծում տալու առնչությամբ:

Թ. Մելիքյանը դիտարկում կատարեց, որ հաշվետվության մեջ այնուամենայնիվ չնշվեցին բացթողումները, իր կարծիքով տիկին Այվազյանի կողմից ներկայացրած դասախոսների աշխատավարձի ցածր լինելը բոլորովին էլ քոլեջի

բացթողումներից չէ, այլ օրինակ օտար լեզուների իմացության մակարդակը ուսանողների մոտ թույլ դրվածք ունի:

Տիկին Այվազյանը պատասխանեց, որ այս հարցը իրենք Գյումրու երիտասարդական պալատի հետ համագործակցելով են լուծում՝ հրավիրելով օտար լեզվի մասնագետներ, սակայն իրենք, իրո՛ք դեռ լիարժեք չեն հասել նրան, որ ուսանողներն ու դասախոսները օտար լեզվի իմացության մակարդակը հաղթահարեն:

Պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ քոլեջում խնդիր է նաև այն հարցը, որ եթե դասախոսներից մեկն իր դիմումի համաձայն դուրս է գալից և նոր մասնագետ էն հրավիրում, խնդիր է առաջանում, քանի որ դասավանդման մոդուլային համակարգին տիրապետելու համար տվյալ դասախասը պետք է վերապատրաստվի, այնուհետև դիմելով պարոն Մելքոնյանին նկատեց, որ քանի որ արդեն բուհը ունի վերապատրաստման դասընթացներ կազմակերպելու փորձ, միգուցե կազմակերպել նաև մոդուլային դասընթացներ կազմակերպել:

Տիկին Այվազյանը նշեց, որ քոլեջում փորձ ունեցող և արդեն իսկ վերապատրաստում անցած դասախոսները մոդուլային դասընթացների վերապատրաստում են անցկացնում նորեկ, անփորձ դասախոսների հետ:

Պարոն Սերոբյանը առաջարկեց գնահատել քոլեջի 2015-2019 ուստարվա գործունեության հաշվետվությունը:

Գիտական խորհրդի անդամներից առաջարկվեց քոլեջի 2018-2019 ուստարվա գործունեության հաշվետվությունը գնահատել բավարար:

Տիկին Այվազյանը ներկայացրեց նաև որոշման նախագիծը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի քոլեջի 2018-2019 ուստարվա գործունեության հաշվետվությունը գնահատել բավարար և առաջարկված որոշման նախագիծն ընդունել հիմք՝ արված առաջարկություններով հանդերձ:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

32անդամ. կողմ՝ 32, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

4. ԼՍԵՑԻՆ՝

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ավագ դպրոցի 2018-2019 ուստարվա գործունեության հաշվետվության մասին

Պարոն Դարբինյանը ներկայացրեց հաշվետու ժամանակաշրջանում դպրոցի աշակերտների ընդունելության, դասարանների բաշխման, հոսքային դասարանների ձևավորման հետ կատարված աշխատանքները, նշեց, որ համեմատական վերլուծություններ են ներկայացված 2017-2018 և 2018-2019 ուստարիների դպրոցի

գործունեության վերաբերյալ, որը զետեղված է էլեկտրոնային նամակի միջոցով գիտական խորհրդի անդամներին ուղարկված հաշվետվության մեջ:

Այնուհետև պարոն Դարբինյանը ներկայացրեց իրենց թույլ և ուժեղ կողմերը, նշելով, որ բյուջեյի ֆինանսական միջոցների հետ կապված դժվարություններն ու խնդիրները պայմանավորված են հիմնականում աշակերտ -թվով ֆինանսավորմամբ, որը լուրջ խնդիր է և իր կարծիքով, կարգավորման կարիք ունի, այնուհետև ասաց, որ կարծես այս տարի այդ խնդրից ազատվում են, քանի որ արդեն դպրոցների ֆինանսավորման սկզբունքը փոխվում է և այն բնականոն կլինի:

Շարունակելով ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում դպրոցի գործունեության հետ կապված աշխատանքները, պարոն Դարբինյանը նշեց, որ իրական վտանգներից իրենք տեսնում են լավ աշակերտ-լավ դպրոց և լուրջ կրթական ծրագրերի կորուստը, իսկ ուժեղ կողմ են տեսնում բոլոր ուսուցիչների և վարչական աշխատակիցների պաշտոնի նկարագրերով իրեց աշխատանքին համապատասխանելը, ուսուցիչները վերապատրաստված են և ատեստավորված, ՏՏ-ի տիրապետում են: Պարոն Դարբինյանը նշեց նաև, որ որակական առաջադիմության թափանցիկության մասով գործունեության ուժեղ կողմերի մեջ աշակերտական շարժի կարևորությունն է նաև: Ներկայացվեց, որ դպրոցն ապահովված է համապատասխան ռեսուրսներով, բացի սպորտ դահլիճից, համալսարանի ղեկավարության կողմից կատարվում են աշխատանքներ այս ուղղությամբ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Ն. Ավետիսյանը նշեց, որ ինքը ծանոթացել է տարբեր դպրոցների հաշվետվության ձևաչափերին և համեմատել իրենց ավագ դպրոցի տնօրենի կողմից ներկայացված հաշվետվության հետ, ապա ավելացրեց, որ դպրոց-ուսուցիչ, աշակերտ-ծնող-ուսուցիչ հարաբերությունները ըստ նախարարության պահանջի ունեն գնահատման չափանիշներ և հաշվետվության մեջ պետք է ներկայացվեն ըստ այդ չափանիշների, սակայն ՇՊՀ-ի ավագ դպրոցի հաշվետվությունը ըստ վերոգրյալի չի կազմվել, այն կծկտուրէ և ինքը դրան ծանոթանալիս, կարելի է ասել ընճախտ է ապրել: Այնուհետև տիկին Ավետիսյանը շարունակելով խոսքը և դիմելով պարոն Դարբինյանին հարցրեց, թե այս տարի ավագ դպրոցի հաշվետվությունն ուղարկվե՞լ է նախարարություն:

Պարոն Դարբինյանը պատասխանեց, որ իր կողմից այն ներկայացվել է համալսարանի ղեկավարությանը, սակայն նախարարություն չի ներկայացվել:

Տիկին Ավետիսյանը ասաց, որ հաշվետվության ձևաչափը պարտադիր է պահպանել և իր կողմից այն համեմատվել է Գյումրու և Երևանի մեկական դպրոցների հաշվետվությունների հետ և ՇՊՀ-ի ավագ դպրոցի հաշվետվության ձևաչափը հեռու է բավարար լինելուց և խնդրում է պահանջվող չափանիշներով

առաջնորդվել, ապա շարունակեց, որ առավել ևս, որ ՇՊՀ-ի ավագ դպրոցը այլ դպրոցների հետ համեմատ ունի բավականին շատ առավելություններ, թեկուզ միայն ֆինանսավորման տեսանկյունից:

Պարոն Սերոբյանը նշեց, որ ավագ դպրոցն իսկապես ֆինանսապես անկախ է, շենքի պահպանման, նյութատեխնիկական հարցերը լուծվում են համալսարանի կողմից, դպրոցի աշակերտությանը տրամադրված են երկու ավտոբուսներ՝ քաղաքի տարբեր թաղամասերից նրանց դպրոց բերելու համար, իսկ սպորտդահլիճի վերանորոգման աշխատանքների համար արդեն ունեն ծրագիր՝ նախարարության հետ, իրենց կողմից ներկայացվել են նախագծա-նախահաշվարկային աշխատանքներ և սպասում են նախարարության պատասխանին: Պարոն Սերոբյանը շարունակեց, որ անցած ուսումնական տարում ավագ դպրոցի աշակերտների հետ բուհի դասախոսների կողմից իրականացված պարապմունքների համար համալսարանը տրամադրվել է մինչև 8 մլն ՀՀ դրամ և այս ամենից հետո իրենք դպրոցից ակնկալում են որոշակի և շոշափելի աշխատանքներ, որոնք տեսանելի չեն:

Պարոն Նիկողոսյանը նշեց, որ տիկին Ավետիսյանի կատարած դիտողությունների մասով կիսում է նրա կարծիքը և դիմելով պարոն Դարբինյանին ասաց, որ նրա կողմից ներկայացրած հաշվետվության կառուցվածքը ձևական իմաստով պահպանում է նախարարության կողմից սահմանված անհրաժեշտ նորմերը, սակայն որակական առումով ամենևին արտացոլված չեն պահանջները, քանի որ բացի վիճակագրական տվյալներից նաև պետք է լինեն թվային տվյալներ, դրանց հստակ վերլուծություններ, դինամիկայի փոփոխության հիմնավորում, պատճառաբանում և կանխատեսում: Պարոն Նիկողոսյանը շարունակեց, որ այդ ամենը չկան հաշվետվությունում, բացի դրանիցինքը մի տարօրինակ բան ֆիքսեց , որը լսեց հաշվետվության ժամանակ. աշակերտ-ուսուցիչ-ծնող կապը ոնց որ թե լավ դրվածքի վրա չէ, այսինքն դպրոցը ուսումնադաստիարակչական գործընթացը որպես այդպիսին ձախողել է, իր կարծիքով ասվածը սա է նշանակում, իսկ տնօրենի և պատասխանատվությունն ինչու՞մն է, որ այդ կապը հստակ արտացոլված չէ և երկրորդ վտանգավոր միտքը իր համար այն էր, որ տնօրենի խոսքով իրենք ունեն լավ շենքային պայմաններ, վերապատրաստված ուսուցիչներ, բայց ունեն վատ կրթություն և հարց ուղղեց պարոն Դարբինյանին, թե վտանգը ինչի՞ հիման վրա է տեսնում:

Պարոն Դարբինյանը պատասխանեց, որ քանի որ անցած տարվա իր հաշվետվությունը եղել էմեկ ուսումնական տարվա մասով, երեք դպրոցները միավորվել էին և ՇՊՀ-ի ավագ դպրոցը նոր ձևավորված էր, ինքը հաշվետու է եղել ինչքան այս պարագայում հնարավոր է եղել, իսկ պարոն Նիկողոսյանին պատասխանեց, որ իր կողմից թվարկված բացթողումները ոչ թե վարչական աշխատանքի բացթողումների հետ են կապված, այլ եթե իր թված եռաշերտ

համակցությունը ավելի ամուր լիներ, իր կարծիքով հնարավոր էր ավելի որակյալ կրթություն ապահովել:

Պարոն Նիկողոսյանը հարցրեց, արդյոք իր կողմից ֆիքսի, որ պարոն Դարբինյանը սխա՞լ է արտահայտվել, թե՞ առաջիկայում ավելի շատ աշխատելու հնարավորություն է տեսնում:

Դարբինյանը համաձայնեց երկրորդ մտքի հետ:

Պարոն Սերոբյանը ասաց, որ դպրոցների միավորումից հետո, երբ ուսուցիչների քանակը աշակերտներից շատ էր, իր կողմից առաջարկվել է որոշ հաստիքների կրճատում կատարել, քանի որ դրանք ոչ մի դպրոցում չկան, , օպտիմալացվել են վարչական որոշ հաստիքներ, որոնց արդյունքում ունեցել են աշխատավարձի 10 մլն. ՀՀ դրամի խնայողություն, ապա շարունակեց, որ այսօր իրենք ունեն նաև աշակերտության դասի հաճախելիության խնդիրը և տիկին Ավետիսյանի ու պարոն Նիկողոսյանի մտահոգությունն իր կարծիքովայն է, թե նման պայմաններում ինչու որոկյալ կրթություն չի իրականացվում:

ԵՎ. Մաթևոսյանը Պարոն Դարբինյանին միքանի հարցեր ուղղեց կապված շրջանավարտների քանակի, ՇՊՀ դիմած աշակերտների քանակի մասինև իր մտահոգությունն հայտնեց, որ դեպի համալսարան դիմորդների քանակը բավականին քիչ է, և եթե ՇՊՀ-ի ավագ դպրոցը Գյումրու մյուս դպրոցների նման լինի և շրջանավարտների միևնույն քանակնը դիմի իրենց բուհ, ապա իզուր են իրենց ջանքերը, հարցրեց, թե ինչու ավագ դպրոցի մեդալակիր ուսանողները իրենց բուհում չեն սովորում, այլ գերադասում են այլ բուհեր գնալ:

Ա. Մկրտչյանի կարծիքով հարձակման թիրախը սխալ է ընտրված, այսինքն ոչ թե դպրոցը պետք է լինի, այլ բուհը և եթե ավագ դպրոցից իրեն բուհ չեն գալիս, ապա բուհն է մեղավոր, ոչ թե դպրոցը, ապա շարունակեց, որ բացի դրանից, դպրոցի գործունեության ցուցանիշը պետք է գնահատվիբուհ ընդունվողների տոկոսով, թե որ բուհն են գնացել հատկապես շրջանավարտներըև իր կարծիքով նման վերլուծությունը պետք է կատարվի ՇՊՀ-ի կողմից:

Վ Մաթևոսյանը հակադարձեց, որ ինքը այդքան էլ համաձայն չէ, քանի որ փաստեր ունի ավագ դպրոցի ուսուցիչների աշակերտներին այլ բուհեր ուղղորդելու առնչությամբ:

Պարոն Մկրտչյանի կարծիքով այսօր շփումը աշակերտների ծնողների հետ գրեթե դարձել է անհնար և սա համակարգային հարց է դարձել, այնպես որ եռակողմ համագործակցությունը դպրոցում քննարկման արդյունք չի կարող լինել:

Կ. Պետրոսյանը հարց ուղղեց պարոն Դարբինյանին, որ ուսուցիչների ընդամենը 14 տոկոսն ունի տարակարգ, արդյոք այս ցուցանիշը գոհացուցիչ է ավագ դպրոցի պարագայում:

Պարոն Դարբինյանի կարծիքով այս հարցը ունի օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ, և իր կարծիքով ոչ բոլոր դեպքերում է տարակարգ ստացած ուսուցիչ արժանի այդ տարակարգին, քանի որ շամանակները այնպիսին էին, որ շատ հեշտությամբ կարող էին ստանալ տարակարգը:

Պարոն Սերոբյանը շհամաձայնեց պարոն Դարբինյանի մտքի հետ, հակադարձելով, որ ինքն էլ է ստացել տարակարգ նդա շատ լուրջ ջանքեր է պահանջում և հենց այնպես ոչ ոքի չեն տալիս տարակարգ և ինքը համոզված է, որ ՇՊՀ-ի ավագ դպրոցի տարակարգ ունեցող ուսուցիչները իսկապես որակյալ կրթություն կարող են ապահովել: Պարոն Սերոբյանը շարունակեց, որ , որ իր նման քննարկման նպատակը իրավիճակի շտկումն է և երկու տարի առաջ մասնագիտական ամբիոններից ձևավորեցին խմբեր, որոնք դասալսումներ կատարեցին դպրոցում, պարզելով, որ ունեն փայլուն ուսուցիչներ, իհարկե, որոշներն էլ դուրս եկան, ապա պարոն Սերոբյանիը առաջարկեց, որ մասնագիտական ամբիոններից գործնական առաջարկներ արվեն դպրոցին աջակցության առումով:

Պարոն Դարբինյանը ասաց, որ իսկապես մայր բուհից իրենք ակնկալում են աջակցություն և իր կարծիքով համալսարանընիր մասնագիտական որակներով ու ռեսուրներով կարող է օգնել դպրոցին ուսուցիչներն էլ ուրախ կլինեն այդ աշակցության համար:

Ս. Սարգսյանի կարծիքով դպրոցի տնօրինությունն աշխատում է իր հնարավորության սահմաններում, բայց անդրադարձ կատարելով անցյալին նշեց, որ իրենք ժամանակին ունեցել են փայլուն դպրոց, որտեղ շրջանավարտների ճնշող մեծամասնութնունը ընդունվել է իրենց բուհը և եթե իրենք սրտացավ են, ապա պետք է մտածել լուրջ կազմակերչական գործունեություն ծավալելու մասին, որպեսզի մոտ ապագայում ունենալ այնպիսի դպրոց, որը նախկինում ունեցել են:

Տիկին Ավետիսյանը հարց ուղղեց պարոն Դարբինյանին, թե արդյոք ունի որոշման նախագիծ, պարոն Դարբինյանը ասաց, որ չունի:

Տիկին Ավետիսյանն առաջարկեց գիտական խորհրդի նիստում հնչած բոլոր առաջարկությունները ներառված պարոն Դարբինյանի կողմից կազմվի որոշման նախագիծ և ուղարկվի գիտական խորհրդի անդամներին:

Պարոն Մելքոնյանը առաջարկեց հիմնադրամի ավագ դպրոցի 2018-2019 ուստարվա գործունեության գնահատումը տեղափոխել հաջորդ գիտական խորհրդի նիստի քննարկմանը, երբ պարոն Դարբինյանը կներկայացնի հաշվետվության

հիման վրա առաջադրված որոշման նախագիծ՝ գիտական խորհրդի անդամների կողմից կատարված դիտարկումներով ու առաջարկություններով հանդերձ:
ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ավագ դպրոցի 2018-2019 ուստարվա գործունեության գնահատումը տեղափոխել հաջորդ գիտական խորհրդի նիստի քննարկմանը:
2. Հանձնարարել ավագ դպրոցի տնօրեն Կ. Դարբինյանին երկշաբաթյա ժամկետում ներկայացնել հաշվետվության հիման վրա առաջադրված որոշման նախագիծ՝ գիտական խորհրդի անդամների կողմից կատարված դիտարկումներով ու առաջարկություններով հանդերձ:
3. Հանձնարարել ավագ դպրոցի տնօրեն Կ. Դարբինյանին՝ դպրոցի աշխատակազմով, մեկ ամսյա ժամկետում ներկայացնել ավագ դպրոցի զարգացման կարճաժամկետ ծրագիր:
4. Հանձնարարել համալսարանի կենտրոնների տնօրեններին և մասնագիտական ամբիոնների վարիչներին երկշաբաթյա ժամկետում ավագ դպրոցի տնօրեն Կ. Դարբինյանի հետ համագործակցելով, ներկայացնել ավագ դպրոցի հետ կապված առաջարկությունների փաթեթ՝ աջակցության նպատակով:
ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

32անդամ. կողմ՝ 31, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1(Ա. Սարգսյան):

5. ԼՍԵՑԻՆ՝

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի կանոնակարգի հաստատման մասին

Պարոն Մելքոնյանը ներկայացրեց, որ գիտական խորհրդի անդամները ծանոթ են կանոնադրությանը, դիտարկումներ չեն կատարվել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Ա. Մկրտչյանի կարծիքով այս կենտրոնի տնօրեն լինելու համար կանոնակարգում պետք է լինեն հստակ չափանիշներ, որոնք բացակայում են կանոնակարգում և բացի դրանից կանոնակարգում նշվում է, որ ռեկտորը կարող է կենտրոնի տնօրենին ազատել պաշտոնից, դարձյալ նշված չեն ցուցանիշները:

Պարոն Մելքոնյանը մատնանշեց, որ 4.2 կետում հստակ ձևակերպված են այս դրույթները:

Պարոն Սերոբյանը նկատեց, որ քանի որ սա հայեցողական պաշտոն է, ապա պաշտոնի անձնագիր պետք է ունենալ և ըստ այդմ նկարագրել բոլոր վերոնշյալ ցուցանիշները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի արտաքին համագործակցության եվ հասարակայնության հետ կապերի կենտրոնի կանոնակարգը:
ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

32անդամ. կողմ՝ 32, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

6.1. ԼՍԵՑԻՆ՝

ՇՊՀ գիտական եվ գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի՝ «նանո- եվ միկրոտեխնիկայի նյութերի եվ կառուցվածքների մեխանիկայի պրոբլեմային լաբորատորիայի պահպանում եվ զարգացում» 2021 թվականի ծրագրի մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

ՇՊՀ «Նանո- և միկրոտեխնիկայի նյութերի և կառուցվածքների մեխանիկայի պրոբլեմային լաբորատորիայի» կողմից ներկայացված 2021 թվականի գիտական ծրագիրը համարել արդիական և դրական եզրակացությամբ հայտը ներկայացնել ԿԳՄՄՆ Գիտության պետական կոմիտե:
ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

32անդամ. կողմ՝ 32, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

6.2 ԼՍԵՑԻՆ՝

Հավատարմագրման գործընթացի աշխատանքների մասին

Պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ հավատարմագրման գործընթացի հետ կապված աշխատանքները ընթանում են ըստ ժամանակացույցի և շնորհակալական խոսք ուղղեց այս ուղղությամբ աշխատանքներ իրականացնող հանձնախմբի անդամներին և բուհի աշխատակիցների բոլոր աջակից խմբերին: Պարոն Սերոբյանը հշեց նաև, որ այսուհետ տեղի ունենալիք գիտական խորհրդի բոլոր նիստերի ընթացքում Ա. Սարգսյանի կողմից հավատարմագրման գործընթացի հետ կապված աշխատանքների ընթացքի վերաբերյալ զեկուցումներ կլինեն, որպեսզի գիտական խորհրդի անդամները պատշաճ տեղեկություն ստանան այս աշխատանքների վերաբերյալ:

6.3 . ԼՍԵՑԻՆ՝

Վ. Խաչատրյանը ներկայացրեց, որ իր կողմից ներկայացվելիքը ոչ թե հարց է, այլ մտահոգություն, առ այն, որ գիտական խորհրդի անդամները արդեն իմունիտետ են ձեռք բերել, քանի որ անընդհատ իրենց համալսարանի մասին որոշ ուժեր վատ են

խոսում և իրենք լռում են։ Այնուհետև պարոն Խաչատրյանը անդրադարձավ հանրային հեռուստատեսությամբ համալսարանի հասցեին <<ռեսթարթ>> խմբի մեր համալսարանի ուսանողի կողմից սխալ լուրեր տարածելու հարցին՝ ասելով, որ իր կարծիքով պետք է պատասխան պահանջել, քանի որ համալսարաաանն ունի լրատվություն և նրանց կողմից անհրաժեշտ է պահպանել համալսարանի շահերը։

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ ինքը հրավիրել է հեռուստատեսությամբ համալսարանի մասին հաղորդող խմբի ներկայացուցչին, զրուցել նրա հետ, ասել նրան ներկայացնելու իրենց կողմից համալսարանում կատարած մոնիտորինգի արդյունքները, որպեսզի հասկանան, թե ինչքանո՞վ է դա իրական։

Ս. Հայրապետյանի կարծիքով պետք է համալսարանի կողմից պատասխան հնչի այդ վիրավորանքներին ու զրպարտություններին։

Պարոն Սերոբյանը չհամաձայնեց պարոն Հայրապետյանի հետ և նշեց, որ հարկ է, որ բուհում կատարված աշխատանքները ի ցույց դրվեն։

Պարոն Հայրապետյանի կարծիքով, այսօր ֆեյսբուքը հասարակության ականջներն են և համալսարանին հնչվել է պետք, ոչ մի տեղ իրենք չեն հնչվում, նախկինում Շիրակ հեռուստատեսությամբ իրենք եթերաժամ ունեյին և հիմա էլ հարկավոր է որոշակի ֆինանսներ ծախսել և ասենք Ցայգ հեռուստատեսությամբ նույնը ունենալ և եթե մեկ անգամ պատասխանել վիրավորանքներին, ապա, իր կարծիքով, այլևս չեն վարկաբեկի։

Պարոն Սերոբյանը չհամաձայնեց, որ իրենց պատասխանից հետո չեն վարկաբեկի և իր կարծիքով Ցայգ հեռուստատեսությամբ եթեր ունենալը բավականին թանկ կնստի բուհի վրա։

Պարոն Հայրապետյանը նշեց, որ կարելի է բանակցել հեռուստատեսության աշխատակազմի հետ, ի վերջո փոխշահավետ համագործակցության կարելի է հանգել։

Պարոն Սերոբյանը համաձայնելով պարոն Հայրապետյանի վերջին մտքի հետ՝ հանձնարարեց պարոն Մելքոնյանին ուսումնասիրել դաշտը, բանակցել Ցայգի հետ, որպեսզի հնարավորության դեպքում նրանց կողմից հեռուստաեթեր տրամադրվի ՇՊՀ-ին՝ կատարած աշխատանքները ներկայացնելու համար։

Ուսանողուհի Յու. Հովհաննիսյանի կարծիքով, սա շատ կարևոր է, քանի որ ծնողներն էլ կարող են ճիշտ կարծիք կազմել համալսարանի մասին։

1.	Գիտական խորհրդի նախագահ, ռեկտորի ԺՊ	Սերոբյան Երվանդ
2.	Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ	Ավետիսյան Նազելի
3.	ՇՊՀ պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավար	Նիկողոսյան Գագիկ
4.	Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն	Մելքոնյան Հովիկ
5.	Գիտական քաղաքականության, որակի ապահովման ու կառավարման կենտրոնի տնօրեն	Սարգսյան Արմենուհի
6.	Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի տնօրեն	Խաչատրյան Թերեզա
7.	Գիտական քարտուղար (գիտական խորհրդի քարտուղար)	Պետրոսյան Կարինե
8.	Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան	Պողոսյան Բագրատ
9.	Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան	Մելիքյան Թամարա
10.	Սոցիալական գիտությունների և իրավունքի	Հովհաննիսյան Օֆելյա
11.	Մանկավարժության ֆակուլտետի դեկան	Մարդոյան Ռուզաննա
12.	Ռազմական ամբիոնի պետ	Մկրտչյան Արթուր
13.	ՇՊՀ քոլեջի տնօրեն	Այվազյան Կարինե
14.	ՇՊՀ ավագ դպրոցի տնօրեն	Դարբինյան Կարեն
15.	ՇՊՀ արհմիության նախագահ	Խաչատրյան Վալերի
16.	Մ.գ.դ, պրոֆեսոր, (ամենաերիտասարդ դոկտոր)	Սողոյան Սպարտակ

17.	Մ.գ.դ, պրոֆեսոր, (ամենատարեց դոկտոր)	Մկոյան Արտաշես
18.	ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզմաթ. գիտությունների դոկտոր, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր	Սարգսյան Սամվել
19.	Աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոնի վարիչ, աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ	Մարտիրոսյան Լևոն
20.	Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի գործարարության և վարչարարության ամբիոնի վարիչի ԺՊ, տնտ.գ.թ., դոցենտ	Մկրտչյան Արթուր
21.	Մանկավարժության ֆակուլտետի մանկավարժության ամբիոնի վարիչի ԺՊ, մ.գ.թ., դոցենտ	Ղուկասյան Լուսիկ
22.	Մանկավարժության ֆակուլտետի ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոնի վարիչի ԺՊ, մ.գ.թ., դոցենտ	Աղանյան Գևորգ
23.	Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի պատմության և փիլիսոփայության ամբիոնի վարիչի ԺՊ, պ.գ.թ., դոցենտ	Խորիկյան Հովհաննես
24.	Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի իրավագիտության և քաղաքագիտության ամբիոնի վարիչի ԺՊ, պ.գ.թ., դոցենտ	Հովհաննիսյան Արտակ
25.	Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի հոգեբանության ամբիոնի վարիչի ԺՊ, հոգ.գ.թ., դոցենտ	Սահակյան Կարինե
26.	Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր	Հովհաննիսյան Անահիտ

27.	Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ, բան. գիտ. դոկտոր	Հայրապետյան Սերգո
28.	Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի արվեստի ամբիոնի վարիչի ԺՊ, բ.գ.թ., ասիստենտ	Կուրազյան Օֆելյա
29.	Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի միջմշակութային հաղորդակցության և զբոսաշրջության ամբիոնի վարիչի ԺՊ, բ.գ.թ., ասիստենտ	Տեր-Ադամյան Շուշան
30.	Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի վարիչի ԺՊ, բ.գ.թ., դոցենտ	Մաթևոսյան Էվելինա
31.	Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի	Համբարյան Ժենյա
32.	Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի մաթեմատիկա մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի	Հովհաննիսյան Յուլյանա
33.	Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի կենսաբանություն մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի	— Թադևոսյան Սեդա
34.	Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականությունմասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի	— Վիրաբյան Ալլա
35.	Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի թարգմանչական գործ՝ անգլերեն և ռուսերեն մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի	Ամիրխանյան Անուշ

36.	Մանկավարժության ֆակուլտետի տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի	Քոչարյան Անահիտ
37.	Մանկավարժության ֆակուլտետի ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ մասնագիտության 2-րդ կուրսի ուսանող	Խաչատրյան Կարեն
38.	Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի պատմության մասնագիտության մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող	— Աթոյան Արտյոմ
39.	Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի սոցիոլոգիա մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի	— Հովհաննիսյան Հռիփսիմե
40.	Ռազմական ամբիոնի նախնական զինվորական պատրաստություն մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի	Սարգսյան Սվետլանա